նայն քրիստոնէից՝ և ըստ օրինաց իւրեանց լուցանեն կանթեղս և զաշտանակս, և է 'ի ժառանգութեան նոցին, և Հայք վասն խնդրոցս այսոցիկ բազում անգամ 'ի դատ մըտին ընդ Լատինս, և արդելին զնոսա, և ունին վաւերական գրեանս։ Եւ չէ հնար թողուլ զդարաւոր իրաւունս 'ի յափշտակութիւն Լատինաց։ Այն ինչ աւարտեալ էին Հայք զբանս իւրեանց, խուժեցին 'ի ներքս վերակացուք կալուածոց Սիւլէյմանայ Արքայի, և եդեալ առաջի դատաւորին զտուժարն՝ ասեն՝ յաղագս տաճարի Ս. Յարութեան իւրաքանչիւր ամի հազիւ կարեմք առնուլ 'ի Լատինաց 300 ոսկիս։ իսկ 'ի Հայոց և յայլ քրիստոնէից առնումք աւելի քան զ3000 ոսկիս։ եթէ տեղիքս այսոքիկ տացի 'ի ձեռս Լատինաց, եւ Հայք 'ի բաց մերժեսցին, եւ խափանեսցին պաշտօնք նոցին, ուստի՞ պարտ իցէ լնուլ զպակասութիւն արդեանց, զոր օրինադրեաց Արքայն Սիւլէյման, ուստի պարտ իսկ է երկոցունց կողմանց մնալ 'ի վիճակն առաջին, և խնդիրն դարձցի վերստին 'ի Կոստանդինուպոլիս։ Հաճոյ թուեցան բանք վերակացուաց, եւ դատաւորն հանդերձ ժողովով գրեաց զամենայն հանգամանս գործոյն 'ի Դուռն։ ١٠٣١ (1621)։

Ի հասանիլ թղթոց 'ի Կոստանդինուպոլիս, գրեցաւ հրովարտակ (Խաթթի Շէրիֆ), մերժել զվէճս Լատինաց, չնեղել զՀայս, և չգործել ինչ ընդդէմ նախնի սովորութեանց, որպէս պատուիրեալ է յառաջին հրովարտակսն և հաստատեալ 'ի դատարանի, 'ի ١٥ Ռէպիլ ախր ամսոյ՝ ١٠٣١ (1621)։ Սակայն ջանք մեծ էր Լատինաց և աշխատութիւն անխոնջ սակս գործադրութեան հրովարտակին, զի գրեալ էր 'ի նմա, եթէ ոչ անսայցեն Հայք հրամանին և 'ի բաց կացցեն 'ի Ս. Տեղեաց՝ յանդիման լիցին մեծի ատենի կայսեր՝ և անդ վճարեսցեն զիրսն։ Յանձն առին Հայք, և սկսան պատրաստել զհանրագրութիւնս 'ի դատաւորէն և 'ի մեծամեծաց այլազգեաց, և զայլ կարեւոր գրեանս, և ելին 'ի ճանապարհ երթալ 'ի քաղաքն Արքայանիստ։ Զի չեւ եւս հասեալ սոցա անդ և յանդիման լեալ մեծի ատենին։ Լատինք բարձին զկանթեղունս Հայոց 'ի Ս. Տեղեաց, խորտակեցին զարկեղունս և զպահարանս, և յափշտակեցին զզգեստս և զպատս եկեղեցւոյ և անյայտ արարին։ Լու եղեւ անակնկալ